

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարերայտագիրքի դիմում են ուղղակի
Կոնսուլ. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդ մասին լիզուով:

Ցայտարարութիւն երբ որ ցանկեր վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց օրգանը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նա-
մակ Նոր-Բայազէդի, Նամակ խմբագրին, Նա-
մակ խմբագրին, Նամակ խմբագրին, Ներքին
լուրերը—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայոց խմ-
բին, Ֆրանսիա, Անգլիա, Թիւրքիա, Նամակ
Թիւրքիայից, Արաբիայի լուրերը—ՀԵՌԱԳԻՆՆԵՐԻ
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

ՀԱՅՈՑ ՕՐԳԱՆ

Թէ փարիզից, թէ Կ. Պօլսից, թէ Վիեն-
նայից մեր բոլոր թղթակիցները վկայում են
որ Վիեննայում հրատարակվող «Journal
d'Orient» ֆրանսիական լրագրի հայոց օր-
գան դառնալը մեծ նշանակութիւն կունե-
նայ հայոց խնդրի վճռվելու համար:

Ռուսաստանի հայերից ենք սպասում, որ
նրանք իրանց նիւթական միջոցներով նը-
պաստեն այդ լրագրի գործունէութեանը:
Արդէն, ինչպէս մեզ հաղորդում են, յիշեալ
լրագիրը նուիրել է այս օրերս յօգուածնե-
րի մի շարք հայոց խնդրին: Նշանաւորն
այն է, որ լրագրի ուղղութիւնը բարեկամ է
և հայերին և ռուսաց կառավարութեանը:
«Մասիս» լրագիրն էլ յիշում է իր համար-
ների մէջ Վիեննայի լրագրի հայերին խիստ
նպաստող յօգուածների մասին:

Եւեղ ուղարկվեցան այդ լրագրի այն հա-
մարները, որոնց մէջ հրատարակված էին
հայոց խնդրի վրա յօգուածներ, բայց ցա-
ւում ենք որ մինչև այժմ այդ համարները
մեր ձեռքը չը հասան: Անկարելի է կար-
ծել, ի հարկէ, որ «Journal d'Orient»
լրագրի համարներին Ռուսաստանի մէջ
մուտքը արգելված լինի, քանի որ այդ լը-
րագիրը խիստ բարեկամական կերպով է վե-
րաբերվում դէպի Ռուսաստանը: Երևի հա-
մարները այս կամ այն քաղաքի փոստա-
տան մէջ ընկած մնացել են և մենք մեր
համարների չը ստանալը վերաբերում ենք
աւելի փոստի անհոգութեանը, քան թէ
մի որ և է այլ պատճառի:

Ինչ և ինչ, լրագիրը գոյութիւն ունի,
նա գործում է յօգուած հայոց խնդրի լուծ-
ման, խմբագիրը ամենքին և նոյնպէս Ներ-
սէս օրագրանին նամակով յայտնել է իր
համակրութիւնը դէպի հայոց ազգը և իր
պատրաստակամութիւնը նպաստել հայոց
խնդրի վճռվելուն:

Բայց մենք, ռուսահայերս, կը ստանանք
թէ չենք ստանայ այդ լրագրի համարնե-
րը,—փոյթ չէ, միայն թէ հաստատ իմա-
նայինք որ մեր նիւթական օժանդակու-
թեամբ նպաստած ենք Եւրոպայում մի
հայոց քաղաքական օրգանի գոյութեանը,
որ տարածվում է բոլոր դիպլոմատական
շրջաններում: Պ. Վ. Արծրունու փարիզից
մեզ գրած նամակից մենք եղբայրակամ
ենք որ «Journal d'Orient» լրագրի խմբա-
գիրը, երբ իր թերթի մէջ հրատարակում
է մի յօդուած հայերի մասին, նա աշխա-
տում է յօդուածը բովանդակող համարը ա-
ւելի մեծ քանակութեամբ ամեն նշանաւոր
անձանց և բարձր դիպլոմատական շրջան-
ներին ուղարկելու:

Այդ պատճառով, մեզ հայերին համար,
գլխաւորն այն չէ, որ մենք անպատճառ

մեր աչքերով կարդանք այդ տեսակ յօ-
դուածներ, բայց հաստատապէս իմա-
նանք, որ հայոց դատը պաշտպանող կշիռ
ունեցող մի թերթ կայ Եւրոպայում և
ամեն միջոցներով ջանանք նրա գոյութեանը
նպաստելու:

Այդ պատճառով մենք դիտաւորութիւն
ունենք, բացի հաւաքվող բաժանորդագրու-
թիւններից, մեր ձեռքում եղած դրամի մի
մասը, որ ժողովված էր յօգուած թիւր-
քաց հայաստանի, ուղարկել Վիեննայի
ֆրանսիական լրագրին, նրա գոյութեանը,
որպէս հայոց օրգանին, նպաստելու նպա-
տակով: Հրաւիրում ենք և ցանկացողներին
մեզ օգնել այդ գործում իրանց կամաւոր
նուիրատուութիւններով:

Այն փողերը, որոնք կը հաւաքվեն այդ
գործին, մենք ուղղակի կը հասցնենք Ներ-
սէս սրբազանի անձնական տնօրինութեանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԴԻ

Օգոստոսի 3-ին

Նոր-Բայազէդ գաւառական քաղաքը, որ դրոն-
վում է Գեղամայ ծովափի եզերքին, բարոյա-
պէս և մտաւորապէս ստոր է և շատ յետ է
մնացել ոչ թէ միայն միւս հայաբնակ գաւառա-
կան քաղաքներից, այլ և շատ վերջը, դարձեալ
կան կենտրոն, բարոյապէս և մտաւորապէս շատ
աւելի բարձր են Նոր-Բայազէդից:

Խաւար, աղիտութիւն մտաւոր և ազգային
անշարժութիւն, անտարբերութիւն, ահա նոր-
բայազէդցիների յատկանիշները:

Հոգեւոր երկուսեւ դարձեալ կատարեալ ան-
բարեկարգութեանը զլուրմի տգէտ և ա-
նարժան իրենց կոչմանը, վարժունքին նոյնպէս
անարժան է իր պաշտօնին: Սա իր անպարկեշտ
կենցաղավարութեամբ նորերումս առիթ տուցել
հրացանաձորութեան, մեծ աղմուկի ժողովրդեան
մէջ, և դատաստանական ընկերութեան: Քահանա-
ները նմանապէս տգէտ, անարժան իրանց վսեմ
կոչմանը, արանք կմկմալով են կարգում ս. Կիր-
քը, իմաստը ամենին չեն ըմբռնում և շատերը
ազգանունները ուղիղ ստորագրել անգամ չը
գիտեն: Երբ ապաշխարութեան օրերը մտնեն
են, մեծ պահքը հասնում է (մեղանում քարո-
ղութիւնները լինում են առհասարակ մեծ պա-
սին) նրանք փոխանակ քարոզներ աւելու, Զա-
քարիայի նման պապանձում են, լիզուները փո-
րերն են ընկնում, իսկ աղիզողը գոյրջիներից
(այստեղ մեծ մասամբ արագ են կոնոնում) օր-
նաձեւերը բլրու են կտրվում, էլ չեն լուում:

Ժողովրդեան առաջնորդների կատարեալ բացա-
կայութիւն է տիրում, բայց պէտք է ասել, որ հայ
ժողովուրդը լաւ գործունէայ և անչափաւոր առաջ-
նորդների, գործողների առաջնորդութեամբ ըն-
դունակ է շատ բան անել, մեծամեծ գործել:
Այդ քաղաքում դուք չէք պատահի մի փոքր
շատ զարգացած, հասկացող երիտասարդի նոր
սերունդը սասճ բանը այդտեղ չը կայ, բացի
մոռացալ վերել ասել, մի երկու երիտասար-
դներից, որոնք Երևանի պրոգիմնադիպում հաղի-
թէ ուսման հոգը առել են կաթնով լի բերան-
ներով, անաստուածութիւն են քարոզում:

Ահա մի տխուր պատկեր Նոր-Բայազէդի
կենտրոնի: Երկուսեւ դարձեալ, այդ միակ հաստա-
տութիւնը, որ պիտի դատարարէ նոր սերուն-
դը, բարձրացնէ ժողովրդի բարոյական ու մտա-
ւոր զարգացման մակերևութը, քահանաներ
պատրաստէ գաւառի համար, տգիտութիւնը
հալածէ, տիրապետող նախապաշարմունքները ար-

մատախիլ անէ, այսօր չէ համապատասխանում
իր կոչմանը, ընկել է, կատարեալ անբարեկարգ
է, ամենաողբալի գրութեան մէջ է. այն ինչ դա
կարող էր մեր բարեկարգ դպրոցների կարգը
մտնել, որովհետեւ ամենաղիտաւ պայմանը, նիւ-
թական դրութիւնը, որից զլուարապէս կախ-
ված է դպրոցների բարեկարգութիւնը, ապա-
հոված է:

Ժողովուրդը սիրում է ուսում, կրթութիւն,
համակրում է ուսումնարանին, ուղարկում է
իր զաւակներին ուսումնարան, տալիս է իր
կարողութեան չափով դաւանական օժանդա-
կութիւն, բայց ցաւով պէտք է ասել, որ նրա
յոյսերը չեն արդարանում, որովք տարիների
ընթացքում ոչ ընդհին ոչինչ, կատարեալ ոչինչ են
ստիպում, ենթակառուցվել ընթանում են, հո-
գեպէս սպանվում են և անընդունակ դառնում
ուսման՝ չնորհիւ տիրացու, տգէտ ուսուցիչ-
ների:

Եւ հենց այս է լինում պատճառը, որ ժողո-
վուրդը հեռանալէ սառնում, անտարբեր է դառ-
նում, դարձում է ուսումնարանին համակրե-
լուց և հետեւաբար շատ պարզ է, դադարեց-
նում է և դրամական օժանդակութիւնը:

Ասացէք խնդրեմ, մի մարդ կարող է տալ
ուրիշին այն, որ ինքը չունի, ուսուցանել, երբ
ինքը չէ ուսել, առաջնորդել, երբ ինքն է կա-
րօտ առաջնորդութեան: «Որ ոչ լուիցէ ուն-
կամ, լուիցէ թիկամ», օրհնեալ է փայտն, որով
լինի արդարութիւն ահա Նոր-Բայազէդի ման-
կավարժների սկզբունքները, որ անաղար կըրկ-
նելով աշակերտներին և նրանց ոտ ու գլուխը
ջարդելով ջանում են կրթել նոր սերունդը:

Ահա այսպիսի անձինք են Նոր-Բայազէդի
ինքնակոչ ուսուցիչները. մէկը վանեցի մի ար-
գէտ տիրացու, իսկ միւսը գաւառական ուսում-
նարանում սովորած մի գրագիր, որը պաշտօնից
արձակվելուց և շատ անգործ թափառելուց
յետոյ ստանձնում է ուսուցչի պաշտօն:

Միակ միութարական բանը այն է, որ դպրոց-
ների արդի հոգաբարձութեան, մանաւանդ նրա
մի անդամի, պ. Մ. Ափրիկեանցի անձնուէր,
եւանդուն և անչափաւոր ջանքերով ուսումնա-
րանի անտեսական գրութիւնը բարձրվել, աղ-
բիւրները կրկնապատկել են: Շնորհակալու-
թիւն և պատիւ հոգաբարձութեան, մանաւանդ
նրա անդամ պ. Ափրիկեանցին:

Բայց հոգաբարձութիւնը որքան խնամք է տա-
նում և հոգում անտեսական մասի վրա, այնքան
անխնամ ու անփոյթ է արել ուսումնարանի
ուսուցչական մասը, բաւականաչափ ուսումնա-
կան մասը յանձնելով մի տիրացուի և մի գրագ-
րի, որոնք ոչ միայն անկարող են մի զգալի ար-
դինք արտադրել, այլ և մեծ վնաս, բարոյական
հարուած են տալիս ուսումնարանին և նրա գո-
յութեան անգամ վտանգ սպառնում: Այն ինչ
հոգաբարձութեան զլուարապէս նպատակը պիտի լի-
նի ուսումնարանի ուսումնական մասի բարե-
կարգութիւնը, իսկ անտեսականը միայն միջոց
զլուարապէս նպատակին հասնելու, ուսումնական
մասը բարեկարգելու: Իսկ ուսումնական մասը
կարելի է բարեկարգել միմիայն հմուտ և օրինա-
ւոր ուսուցիչներիով:

Ի նկատի ունենալով դպրոցների նիւթական
ապահով գրութիւնը (եթէ չեն սխալվում տա-
րեկան 2,300 ռ., արդիւնք ունի), որի համար
պէտք է շնորհակալ լինել արդի հոգաբարձու-
թեանը, եւ, որպէս բարեկամ, վստահանում ենք
մի բարեկամական խորհուրդ տալ մեծ. հոգա-
բարձութեանը և քաջայայտ ենք, որ հոգաբար-
ձութիւնը կը լսէ իմ խորհուրդը, լաւ ըմբռնե-
լով և համոզվելով այն ճշմարտութեան մէջ, որ
չէ կարող ուսուցանել նա, ով ինքն չէ ուսել,
որ մարդ չէ կարող տալ ուրիշին այն բանը,
որ ինքը չունի:

Ահա իմ խորհուրդը:
Որովհետեւ մինչև ուսումնական տարվայ ըս-

կիցը, մինչև սեպտ. դեռ բաւական ժամանակ
է մնում, թող հոգաբարձութիւնը շտապէ հրա-
ւիրել հմուտ, օրինաւոր և փորձառու ուսուցիչ-
ներ և մի ընդունակ ու բարոյական վարժունքի
գործադրիչ վարժարութեամբ, որովհետեւ լրար
միւս ծուէնի չի ունենայ, 25—30 ռուբլով միայն
տիրացուններն ու գրագիրները կը համաձայ-
նեն ուսուցանել, որոնցից մի այդքան դեռ պէտք
է առնել նրանց ուսուցանելու համար և ոչ թէ
տալ: Ապահանք և յուսանք:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, օգոստոսի 12

«Մշակ» լրագրի մէջ կարդալով, որ վարձով է
տրվում մի խանութ Թիֆլիսի ծածկված Բազադ-
խանում, որ պատկանում է Էջմիածնին, աճուրդի
ժամանակ Թիֆլիսի վաճառականներս զնայինք
կապով վերցնելու յիշեալ խանութը: Աճուր-
դին ներկայ էր և ամենքին ծանօթ պատուար-
ժան Մամբրէ վարդապետը, Աճուրդի ժամանակ
գինը հասաւ մինչև 400 ռուբլու: Կոնսիստորիայի
մէջ ծառայող մի պարոն իսկոյն վերկացաւ և
խառնվեց մեր մէջ որպէս մի վաճառական: Ի
հարկէ նրա միտքն այն էր, որ մի քանի ռուբլ
ստանայ. բայց մենք խմանալով պարոնի դիտա-
ւորութիւնը, որ աճուրդի ժամանակ եկել էր,
ուստի թողնեք փոքր ինչ մտածելու: Նոյն ժա-
մանակ վաճառականներէրց մէկը զնայ պարոնի
մօտ ու փորձելով նրան, մի գուժար խոստացաւ,
որպէս զի չը մասնակցի աճուրդին: Բայց պա-
րոնը կարծելով, թէ ուղիղ տաւո են խոստացած
գումարը, պատասխանում է. «այդ քիչ է, չեմ
ընդունի, ինչ լաւեղ կանեմ այդ փոքրիկ գու-
մարը»: Պարոնը մտադրել էր մինչև 100 ռ. ուղե-
լու: Սրանից յետոյ վաճառականներից մէկը
առաջ եկաւ և ասաց, թէ մենք մինչև 700 ռ.
կը վճարենք, և եթէ յիշեալ պարոնը կարող է
այդքան վճարել, թող վերցնի: Վերջապէս շատ
խօսելուց յետոյ, մենք հասցրինք մինչև 600 ռ.
բայց պարոնը 600-ի վրա 150 կ. աւելացրեց,
իսկ մենք հրաժարվեցանք աճուրդից: Այդ ժա-
մանակ Մամբրէ վարդապետը մեր վաճառական-
ներից մէկի ձեռքից բռնեց և ասաց. «թէ իմ
կարգը կը սիրէ 50 կ. աւելացրէ և դուք
վերցրէք»: Բայց Մամբրէ խօսքը մնաց անկա-
տար: Սրանից յետոյ անցաւ 3 ամիս և յիշեալ
խանութը մնաց դատարի: Կոնսիստորիան 3
ամսվայ վարձից գրկվելուց յետոյ, վերջապէս
վարձով տուեց 450 ռուբլով: Մի անգամ անց-
նելով Սիօնի փողոցով գեր. Մամբրէն, վաճա-
ռականներից մէկը ասաց նրան. «չէ՞ք սուրբ,
մեր 600 ռ. զաւլ էր (կեղծ), իսկ 450 ռ. ոչ»: Բայց
վարդապետը պատասխանեց. «քեզ ինչ
մուգը իմն է, ուղեցի և տուի»:

Ահա մեր գեր. Մամբրէն այդպիսի գործերով
է պարապած և իրաւ շատ հմուտ է իր գրպանը
հաստացնելու: Եւ դարձեալ գտնվում են մար-
դիկ, որոնք գովում են նրա նմաններին: Այդ-
պիսիները, ի հարկէ, ունեն իրանց շահը, առանց
այդ չի լինի: Նրա խօսքերից ինչպէս երևում է
Էջմիածնի մուգը իրն է, գուցէ և շուտով հաս-
տատել տայ իր վրա: Իսկ մեր կոնսիսի ի հարկէ
իր մասն ունի, ահա դա է մեր հոգեւոր կառա-
վարութիւնը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաշնորաշէն, 1 օգոստոսի

Ձեր պատուական լրագրի 133 համարի մէջ
կարդացինք Հին-Նախիջևանից գրած մի նամակ
առանց ստորագրութեան, որի մէջ նամակագիրը
հաղորդում է Մաքուի և Սուտ գիւղից փախած
քուրդերի Շարուր-Կարալակեղազ գաւառում

լինելու և նոցա արած անկարգութեանց մասին, այդ լուրը չափազանց համարելով խոնարհաբար խնդրում եմ, պ. խմբագիր, բարեհաճէ՞ք տպել հետեւեալը:

Հարուր-Կարապետեան զաւառում ոչ մի օրի-նակ չէ եղել որ աւազակները գութանի տա-կից գոմէշ կամ եղ խոն և փախցնեն Պարսկաստան. այլ յուլիս ամսում անյայտ աւա-զակներ գողցան էին չորս գոմէշ. զաւառական պահապան ձիւնորները գիշերովայ չրջելու ժամա-նակ պատահելով նրանց յետ են խլում գողա-ցած գոմէշները: Արդեօք այդ աւազակները քուրդներ էին, թէ թուրքեր յայտնի չէ, որովհետև թուրք աւազակներն էլ գողութիւն գնալու մի-ջոցին, իրանց քուրդ ձեռնակներ համար, քուրդի գլխարկ են ծածկում: Թէև պատա-հել է մարդասպանութիւն, բայց ոչ թէ գողու-թեան (կողոպտելու) նպատակաւ, այլ թշնամու-թիւնից: Բաշնորաշէնի կայարանից գիշերը ձիա-ւորները, (եռաշէնիները) քնած ժամանակը գուրս են փախցնում հինգ ձի, որոնցից երկուսին, մի և նոյն գիշերը ձիավարները ձերբակալում են դաշ-տում, իսկ մնացած երեք ձիաները անյայտ մարդիկ դաշտից գողանում անց են կացնում Նրասխով Պարսկաստան. մի քանի օրից յետ այդ ձիաները, համաձայն պ. զաւառականի նա-մակին, Մաքուայ խանը իր սահմանում գտնում է և վերադարձնում տիրոջը:

Այս տեղեկութիւններս ձեռն ինձ յայտնի են, ինչպէս գործարար պոլիցիական կառավարու-թեան:

Յովհաննէս Տէր-Յովհաննէսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Թիֆլիս, 13 օգոստոսի

Հաս տեղերից դիմում են ինձ հարցնելով սուր-տերի դէմ (տափակ մանր ձիւն) իմ պատրաստած դեղի գինը, որի համար պէտք է իւրաքանչիւրի հետ առանձին թղթակցել, ուստի լրագրի միջո-ցաւ յայտնում եմ ով որ կամենում է այդ դե-ղը ինձանից ստանալ, մէկ տարեկանից մինչ տասն և երկու տարեկան հասակի համար, պէտք է ուղարկի վեց լուրի, իսկ նրանից վերի հա-մար տասն և մէկ լուր: Բոստի ծախքը ինձա-նից, և նմանապէս գրել տարիքը և ինչ սեռի համար է: Չքաւորները պայտուղաթղթով կու-ղարկեն կէս գինը. իսկ Թիֆլիսի մէջ ընդունող-ները հինգ լուրի և տաս լուրի. չքաւորները նմանապէս կը վճարեն կէս գինը:

Իմ հասցէն. Вѣ г. Тифлисъ. Мартиросу Ах-назаряну, Сололакская улица, магазинъ Вар-шавская Пекарня.

Մ. Հախնազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի օր, օգոստոսի 12-ին, երեկոյեան 11½ ժամին ԹԻՖԼԻՍԻՄ զգալի եղաւ երկրա-շարժի մի հարուած:

ԱԽԱԼՔԱՒԱՐԻՑ պ. Բ. Պիճիկեանց, ընթեր-ցարանի հիմնադիր անդամների վարչութեան կող-մից շնորհակալութիւն է յայտնում այն երիտա-սարդներին, որոնք Թիֆլիսում աշակերտներ լի-նելով, ամառվայ արձակուրդներին Ախալքալա-քում ներկայացում տուեցին յօգուտ դպրոցին կից ընթերցարանի և ստացած արդիւնքով բերել տուեցին 52 օրինակ ընթերցանութեան գրքեր:

Մենք ստացանք ՕՐԴՈՒՆԻԱԹԻՑ բաղմամբիւ ըս-տորագրութիւններով մի վկայական, որով ստորագրեալները հերքում են այն լուրը որ Ս. Ստեփաննոս եկեղեցու գանձապետ Յովսէփ Տէր-Պետրոսեանց իրան օգնական ընտրած լինի մի թուրք, ինչպէս որ տպված էր «Մշակի» № 116 մէջ: Ստորագրեալները հաստատում են որ մեր լրագրի վերև յիշված լուրը կատարելապէս ան-հիմն է:

Հին-ՆԱԽԻՉԵՆԻԱԹԻՑ մեզ հաղորդում են հե-տեւալ լուրերը: «Տեղիս յաջորդը գնաց Ագուլիս և չրջակայ գիւղերը այցելութիւն անելու: Մեր ուսումնարանը այնքան վատ է գնում որ շատե-րը վախենում են թէ չուսող կը փակվի: Հոգա-բարձուներըց միայն երկուսն են գտնվում քա-ղաքում, բայց մինի վրա կարելի է միայն յոյս դնել: Հարկաւոր է անպատճառ թեմական տեսչի

ներկայութիւնը: Այստեղի մի քանի երիտասարդ-ներ մտադիր են չուսող թատրոնական ներկա-յացուններ տալ: Խորհուրդ ենք տալիս նրանց չը խառնել իրանց գործի մէջ դպրոցի հոգաբար-ձուներին: Ազանակները շատ չոք են անում. մթերքները բաւական առատ են և էժան են վա-ճառվում»:

Մեզ գրում են որ Հին-Նախիջևանի գաւառի Թմուզ գիւղում նորերումս այրվեցին մի քանի կալեր: Ասում են հրդեհ գցողը, ի հարկէ անգի-տակցական կերպով, հղել է մի 7 տարեկան տը-ղայ, աղանձ անելիս:

Երևանից մեզ որպէս հաստատ լուր են հաղոր-դում որ Սեդրակ Մանգինեան ընդունված է ար-դէն որպէս էլմիամանի ձեմարանի պրոֆէսոր:

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ հեռագրում են, որ օգոստոսի 12-ին, գիշերվայ 11½ ժամին, զգալի եղաւ երկ-րաշարժի զօրեղ հարուած: Երկրաշարժի հոսանքը անցաւ արևմուտքից արևելք և տևեց 36 վայր-կեան: Ոստերի վրա կանգնել անհնարին էր: Ու-րեմի Սուրամում երկրաշարժը նոյն ժամանակ է պատահել, ինչպէս և Թիֆլիսում, բայց երևում է թէ այնտեղ անհամեմատ աւելի զօրեղ էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽԿԻՐ

«Մասիս» լրագրում կարդում ենք հե-տեւալը:

Փարիզ հրատարակեալ «Ամերիքան Իը-ջիստը» ամերիկեան թերթն յունիս 16 թւով թղթակցութիւն մը կը հրատարակէ Կ. Պոլսէն, յորում ամերիկացի թղթակիցը լորդ Կիլֆրէրին Կ. Պոլիս գալիս յիշելով, Բերլինի դաշնագրին 61-օրդ յօդուածին վրա կը խօսի և այս առթիւ համակրական խօսքեր կընէ հայոց ազգին և Հայաստանի նկատմամբ: Թղթակցը թիւրքաց հայոց ազգային սահմանադրութեան հանդիման վրա ալ կը խօսի և կը թուի թէ սահմա-նադրութիւնն և նրա հանդէսը լաւ տպաւ-ւորութիւն ըրած են նորա վրա: Արմենիա կարեւոր է Ամերիկայի համար» կըսէ յի-շեալ բարեսիրտ թղթակիցն: Ահա գաղա-փար մը, զոր առաջին անգամ կը լսենք:

«Բայտէրի գործակալութեանը» հեռագ-րում են են Կ. Պոլսից հետեւեալը:

Լօրդ Կիլֆրէրին արդէն մի քանի քայլ ա-րաւ սուլթանին համոզելու համար թէ որ-քան անհրաժեշտ է մոյնել ընթերցանող-Հայաստանի մէջ: Բայց բացակայութիւնը Կ. Պոլսից Ֆրանսիական, ռուսաց և գերմանա-կան դեսպանների, լրագրողների տօնի մօտե-նալը և այն հանգամանքը որ յունաց և չեքոսլովակական խնդիրները դեռ ևս կատա-րելապէս վճռված չեն, պատճառ էին որ լորդի պահանջները դեռ ևս ոչինչ ազդե-ցութիւն չունեցան: Ասում են որ անգլիա-կան դեսպանը համոզում է սուլթանին իր սեփական կամքով մոյնել ընթերցանող-Հա-յաստանի քրիստոնէայ և մահմետական բնակիչների համար և դրանով առաջն առ-նել օտար դեսպանների որ և է ճշմանը: Լօրդ Կիլֆրէրին, ինչպէս լսվում է, խոր-հուրդ է տուել նորին մեծութեանը ուղար-կել Հայաստան իր ամենաընդունակ հպա-տակներից միին, տալով նրան իրաւունք արձակել անընդունակ պաշտօնեաներին և ձեռնամուխ լինել ընթերցանող-իրագործ-ման, որովհետև այդ միջոցով կարելի է առաջն առնել օտար պետութիւնների ներ-կայացուցիչների միջամտութեանը:

«Новая Газета» լրագրին Լօնդոնից հե-ռագրում են:

Համայնքների ժողովի նիստի ժամանակ Չարլս Գիլի, պատասխանելով Բրայդին, ա-նեց. «Յաւում եմ որ մինչև այժմ ոչ մի

քայլ արած չէ Բերլինի դաշնագրի 61-օրդ յօդուածը իրագործելու համար: Լօրդ Կիլֆրէրին այդ մասին առաջարկութիւններ արաւ սուլթանին և թիւրքաց առաջին մի-նիստրին, նրանք երկուսն էլ, ըստ երեւոյ-թի, հասկանում են գործերի գրութեան ծանրակշիռ լինելը: Լօրդ Կիլֆրէրին հաս-տատապէս պնդում էր նրանց մօտ, որ նը-րանք, մինչև որ չը մշակվի ընթերցանող-մշտական ծրագիրը, անյապաղ միջոցներ ձեռք առնէին հեռացնելու ամենամեծ չա-րիքները, նշանակելով Հայաստանում մի ընդունակ վարչութիւն, որին տրված լի-նէին բաւական իրաւունքներ: Գեսպաննե-րից մի քանիսն էր Կ. Պոլսից բացակայու-թիւնը, նոյնպէս գործերի ընդմիջելը բա-մազանի տօնի մօտենալու պատճառով, ար-գիլք էին լինում մինչև այժմ պետութեանց ներկայացուցիչների համաձայն գործողու-թեանը Արմենիայի մէջ մոյնելիլ ընթերց-նողի վերաբերութեամբ: Լօրդ Կիլֆրէրին կա-տարելապէս ըմբռնած է որքան մեծ նշա-նակութիւն է տալիս այդ խնդրին անգլիա-կան կառավարութիւնը և անգլիական ազ-գը. նա յայտնեց, որ չի խնայի իր աշխա-տանքները և ձեռքից չի թողնի ոչ մի ա-ռիթ այդ խնդրի լուծմանը նպաստելու համար»:

ՖՐԱՆՍԻԱ

Անցեալներում Ֆրանսիայի մէջ տեղի ու-նեցաւ մի անցք, որ որքան նշանաւոր էր, նոյնքան էլ անսպասելի: Ֆրանսիական մի-նիստրութեան նախագահ Ժիւլ Ֆերրի օ-գոստոսի 11-ին Նանտի մէջ մի ճառ ար-տասանեց, որով մեկնեց, թէ անհրաժեշտ է Ֆրանսիական սահմանադրութեան վերա-քննութիւնը այն ձևով, որ պահանջեց Գամբետտա Տուրի մէջ արտասանած իր ճա-ռով: Օգուտ քաղելով այդ դէպքից, Ժիւլ Ֆերրի անուանեց Գամբետտային «երևելի հրապարակաբօս»: Նոյն մինիստրը, որ մեր-ժում էր սահմանադրութեան վերաքննու-թիւնը, այժմ յայտնում է, որ Գամբետտա-յից մտադրված սենատի փոփոխութիւնը օգտակար նախադրուչութիւն կը լինի սահ-մանադրութեան համար և ոչ թէ վտան-գաւոր:

Գամբետտա էլ իր կողմից, կարծես պա-տասխանելով Ժիւլ Ֆերրիի ճառին, արտա-սանեց Բելվիլի մէջ մի նոր ճառ, որ հան-րապետական լրագրողներից մինչ այն աստի-ճան խաղաղասէր և չափաւոր է համար-վում, որ նրանք ենթադրում են, թէ Գամ-բետտա կարող է ընդունել ապագայ նոր մինիստրութեան նախագահութիւնը:

Այդ անցքից կարելի է եզրակացնել, որ քաղաքական այդ երկու հակառակորդները կատարելապէս հաշտվել են: Ժիւլ Ֆերրի անպաշտպան թողեց սենատի այժմեան մե-ծամանութիւնը, որը մերժեց Գամբետտա-յի ընտրական օրինագիծը, իսկ Գամբետ-տա իր կողմից մի քանի աննշան գիշումներ արաւ:

Այս բոլորը ճշմարիտ է անսպասելի էր, բայց մի և նոյն ժամանակ շատ հասկանա-լի: Երբ Ժիւլ Ֆերրի Նանտի մէջ արտասա-նում էր իր ճառը, միայն տասն օր էր մը-նացել մինչև ընտրութիւնները: Մինչև այդ օրը Ֆերրի բաւական ժամանակ ունէր իմա-նալու համար, թէ որքան կանգովին Գամ-բետտայի հակառակորդների ջանքերը և համոզվեցաւ, որ յաղթութիւնը Գամբետ-տային կը մնայ: Ժիւլ Ֆերրի չէ պատկա-նում քաղաքական այն գործիչներին, որ ընդունակ են գաղափարին զոհ գնալ: Նա-

խառնելով իր անկման անհրաժեշտութիւնը Ժիւլ Ֆերրի անցաւ. Գամբետտայի կողմը, ի նկատի ունենալով, որ նա կամ կը մնայ մինիստրութեան նախագահ, կամ եթէ կը կազմվի Գամբետտայի մինիստրութիւնը, այն ժամանակ նա կը ստանայ դեսպանի պաշ-տօնը Լօնդոնում, որովհետև այժմեան դես-պան Շալմեյ-Լափուր Գամբետտայի մինիս-տրութեան մէջ արտաքին գործերի մինիս-տրի պաշտօնը կը ստանայ:

Ինչ որ լինի Ֆերրիի կարծիքների փոփո-խութեան պատճառը, ինքն այդ իրողու-թիւնը ապացուցանում է, թէ քաղաքա-կանապէս Գամբետտա մինչև որ աստիճան ուժեղ է: Նրա կամքի առաջ խոնարհվում են ամենքը և ամեն բան: Գրանից երևում է, որ Գամբետտայի հեղինակութեան և նշա-նակութեան անկման մասին մինչև այժմ ասածները անիրաւացի են եղել: Գամբետ-տա կարող է չը նախագահել ապագայ մի-նիստրութեանը, բայց կառավարութիւնը այնու ամենայնիւ ենթարկված կը լինի նը-րա անմիջական ազդեցութեանը:

ԱՆԳԼԻԱ

Լրագրողների մէջ կարգում ենք հետեւեա-լը իրանդական կայուածական նոր օրէնքի մասին: Մի քանի օր առաջ հիմնվելով հե-ռագրական կարճ հաղորդութիւնների վրա, կարելի էր իրանդական կայուածական վե-րանորոգութեան հարցը վերջնականապէս վճռված համարել: Վերջին հաղորդութեան մէջ ասված էր, թէ «Լօրդերի ժողովը ըն-դունեց իրանդական կայուածական օրինա-գիծը երրորդ ընթերցանութենից յետոյ ա-ռանց քուէարկութեան»: Լօրդերի առա-ջարկած խմբագրութիւնները այնքան ան-նշան էին, որ նրանցից անկարելի էր են-թադրել օրինագծի անաջողութիւնը: Գուքս Արգայլի և մարկիզ Սալիսբերիի առաջար-կած նշանաւոր խմբագրութիւնները կարող էին մերժվել համայնքների ժողովից, որի երկրորդ վճիռը կը ստիպէր լօրդերի ժողո-վին պահանջած գիշումներն անել: Մինչև այժմ շատ քիչ է պատահել, որ լօրդերի ժողովը հրաժարվէր հաստատել մի օրէնք, որ ընդունված էր համայնքների ժողովից և որ պահանջում էր երկրի հասարակական կարծիքը: Բայց այս անգամ Անգլիայի մէջ անսպասելի անցք պատահեցաւ, մանաւանդ որ իրանդացիք չափազանց զրոգւած էին և անգլիացիները անհրաժեշտ էին հա-մարում Գլադստօնի առաջարկած վերանորո-գութիւնը:

Լօրդերի ժողովը կայուածական օրէնքի մէջ այնպիսի փոփոխութիւններ մտցրեց, որոնք նոր օրէնքը ձեռնառու են դարձ-նում կայուածատէրերի համար և քննա-կար իրանդացի Ֆերմերների համար. կա-պալի իրաւունքի ծախելը չափազանց սահ-մանափակված է և կայուածատէրերին ի-րաւունք է տրված նշանաւոր գումար վեր-ցնել այն փողից, որ կարող է ստանալ Ֆեր-մերը կապալի իրաւունքը ծախելու ժամա-նակ: Երկրորդապէս «կայուածական դատարա-նի» միջոցները և իրաւասութեան շրջանը նոյնպէս սահմանափակված է լօրդերի ժո-ղովից և բացի այդ ընդարձակված են կա-լուածատէրերի իրաւունքները այդ դատա-րանի վերաբերութեամբ: Այս նշանաւոր փոփոխութիւնները հաղորդված չէին և այդ պատճառով կարելի էր ենթադրել, թէ կայուածական օրէնքը ընդունվեցաւ լօրդե-րի ժողովից: Բայց իսկապէս այն ինչ որ ըն-դունված և հաստատուած էր համայնքների ժողովից, ոչնչացաւ լօրդերի ժողովի մէջ,

այնպէս որ դժուար է նախատեսել զայն տոնի սկսած դժուար գործի աջող վիճակը:

Լորդերի ժողովի մեծամասնութեան առաջնորդ մարկիզ Սալիսբուրի չէ վախճաւ այն դժուարութիւններէն, որոնց ծագումը կարող է վախճաւոր լինել լորդերի ժողովի համար: Անոր հետ, որ այդպէս վարվելով, լորդերը իրանց յոյսը դրել էին համայնքների ժողովի կալուածատէր անդամների վրա, որոնք ակամայից հնազանդվել էին Գլադստոնին: Դժուար է գուշակել, թէ մի-նիստութիւնը ինչպէս դուրս կը գայ իր ծանր դրութենէն: Անոր հետ, որ իր-լանդիայի մէջ հանգստութեան վերականգնելը յետաձգված է մինչև համայնքների ժողովի գործունէութեան հետեւել շրջա-նը, եթէ կառավարութեան և լորդերի ժո-ղովի մէջ փոխադարձ զինուորների վրա հիմնված համաձայնութիւն չի կայանայ:

ԹԻԻՐԻՔԻԱ

„Polit. Corresp.“ լրագրի թղթակիցը հաղորդում է Կ. Պոլսից հետեւեալը: Վերջին պետական դատը զլիսաւորապէս ուղղված էր նախկին սուլթան Մուրադի դէմ, որի մասուր ընդունակութիւնները հետզ-հետէ լուսանում են: Այժմեան սուլթանը հաստատացած է, որ Մուրադ կամ նրա մայրը դաւադրութիւններ են կազմում, կամ դաւադրութիւններ գործիքներ են: Միտհա-փաշայի դէմ ուղղված մեղադրական ակտի մի մասը ակնհայտ էր դարձնում, որ սուլթան Մուրադ և նրա մայրը զլիսաւորապէս մեղաւոր էին Աբդուլ-Ազիզի սպանութեան մէջ: Բացի այդ Մահմադ-Կամար և Նուրի փաշան մահուան պատժի սպառնալիքներից ստիպված մի դոկումենտ ստորագրեցին, որի մէջ ասված է, թէ նրանք հրա-մայեցին սպանել Աբդուլ-Ազիզին Մուրադի կարգադրութեան համեմատ: Իսկոյն են-թադրեցին, որ գործը դրանով չի վերջա-նայ: Պալատի մէջ մի նոր քննութիւն ըս-կավեց, որից երեւաց, թէ Մուրադ, պահա-պան դիտողներին կաշառելով, նրանց նա-մակներ էր տալիս իր կուսակիցների մաս-նաժողովին հասցնելու համար:

Բացի այդ յայտնվել են հետեւեալ ման-րամանները: Սուլթան Մուրադի խելագա-րութենից յետոյ երբ մինիստրների խոր-հուրդը վճռեց նոր սուլթան ընտրել, Միտ-հադ-փաշա Աբդուլ-Համիդին առաջարկեց թիւրքիայի զահը այն պայմանով, որ նա իշխանութիւնը Մուրադին վերադարձնի, եթէ նա առողջանայ: Աբդուլ-Համիդ առաջ մերժեց այդ պայմանը, բայց երբ Միտհադ-փաշա սպառնաց, որ մինիստրների խոր-հուրդը այդ դէպքում նրա կողմը կընտրի, նա իր բարեկամների խորհրդով ընդու-նեց Միտհադի առաջարկութիւնը և մի դոկումենտ ստորագրեց, որ վերոյիշեալ բո-վանդակութիւն ունէր: Աբդուլ-Համիդի զահ-բարձրանալուց յետոյ Միտհադ-փաշա Եւ-րոպա աքսորվեցաւ, որովհետեւ չէր կամե-ցաւ վերադարձնել այդ դոկումենտը և յայ-տնեց, թէ նա մնացել է Բ. Գրան արևելի մէջ: Վերջին դատաստանի նպատակն էր Մուրադի վարկը վերջնականապէս ոչնչաց-նել հասարակական կարծիքի առաջ:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 5 օգոստոսի

Այսօր կարողացայ հիւր լինել Պատրիարքի սեփական տանը Խաս-քէյոյ, որ մէկ ժամկէտ ճա-նապարհ է չղեկնաւոր իմ կեցած տեղից. պատ-

րիարքարանի մէջ յաճախողների բազմութիւնից հնարք չէր կայ մարդավարի կերպով մի բանի վրա խօսել: Պատրիարքին սովորականից աւելի զուարթ և առողջ գտայ: «Երբի ուրախալի լու-րեր կան մեր խնդրի վերաբերմամբ, օրըզօրն», նկատեցի նորան: «Ինչո՞ւ», եղաւ քմիծաղ պա-տասխան: «Չեղ վրա է երեւում այդ»: Սորանով ուղում եմ ցոյց տալ թէ մինչև երբ ատոմոսը կապված է Ներսէսի բարոյական և մտաւոր գո-յութեան հետ հայոց խնդրի հոգը: Պատրիարքը ցոյց տուաւ մի նամակ, որը հէնց նոր էր ստա-ցել Վիեննայի մէջ Ֆրանսերէն լեզուով հրատա-րակվող «Journal d'Orient»-ի խմբագրապետից, որը խոստանում է պատրիարքին նայն ազգու-նիթացքը ի պաշտպանութիւն հայոց դատի շա-րունակել անընդհատ, եթէ միայն իր լրագիրը «Խրախոյս գտնէ»: «de la part de la nation de sa Béatitude».—Ահա յիշեալ լրագրի սեփական խօսքերը:—«Ե՛հ, սորան ինչ պիտի արած» հարց-րեց կրօնաւոր դիւցազը մտահոգութեամբ:—«Ի հարկէ հարկաւոր է կամ խրճիթը ծախես և մի երկու հազար բուրլ ուղարկես հայերի օրգան-կանգնող լրագրին կամ թէ մի երկու հարիւր հատ բաժանորդ գտնես»:—«Ե՛հ, յետոյ, որն է աւելի հեշտը» հարցրեց պատրիարքը նոյն զուարթ դէմ-քով:—«Ի հարկէ հեշտը տուէ՛ր ծախելն է, քան թէ Կ. Պոլսի հայերից երկու բաժանորդ գտնելը մի եւրոպական լրագրին, որը հայոց օրգան է ուղում լինել երկու—երեք հարիւր աւելի բա-ժանորդ ունենալով հայերից:—«Օ՛հ, ծանր է բա-րեկամ...» եղան անտարբեր ազգի արժանալից առաջնորդի խօսքերը:

Այս ամսինց յետ ինքն ըստ ինքեան ծագում է հարց Վիեննայի լրագրին առաւանջոց կողմից բաժանորդ գրվելու: Եւ յիշաւ, զիցուր թէ պ. Գլիօրիէն լինելով մի մասնագէտ լեզուաբան, որին լրագիր ունենալը հարկաւոր է աւելի դա-նազան գիտնական և հնագիտական հարցեր վեր-նելու համար, քան թէ օրական ընթացիկ հար-ցերի, զիցուր թէ ասում եմ, պ. Գլիօրիէն ա-պագայ լրագիրը շատ օգուտներ կարողացաւ ու-նենալ հայոց ազգի անհնր իւրօրոյցում արժեք-ծելու համար, բայց թէ պարզա-խրախոյսի և համակրանայ է արժան մի լրագիր, որը արդէն հիմնված է, ունէ ազդեցութիւն և պարապկում է միայն և եթ օրական և հերթական հարցերով միթէ, կրկնում եմ Վոլկասի հայերը, որոնք մի քանի ամսվայ մէջ միայն «Մշակ»-ի խմբագրա-տուն 42 հազար բուրլ թափեցին Հայաստանի ի-րանց թանգազին արհեստիցների կեանքը փըր-կելու համար, արդեօք նոյն նուիրատու բազմա-թիւ աղին հայերը պիտի անտարբեր մնան Վիեն-նայի այնչափ յայտնի մի լրագրին, որին կարծես երկինքն է ուղարկել հայոց ներկայի և ապագայի հարցերը պաշտպանելու համար մի այնպիսի տէ-րութեան և մայրաքաղաքի մէջ, որի աշառու-թեան և շահախնդրութեան վրա ոչ ոք եւրոպա-կան կարիւնաներից չէ կարող կապված անգամ ունենալ: Ուրեմն, ոչինչ ապակայս չը կայ որ պատրիարքի յոյսը ի դերն չը պիտի դուրս գայ Վիեննայի հայոց օրգանին օգնելու վերաբե-րմամբ, որը à propos ասած մեր տերութեան շահերին ամենին չէ դիպում, այլ ընդհակա-ռակը շատ համակրանքով է վերաբերվում. այս-պիսի մի ուղղութիւն մի աւատարեական լրագրի կողմից դէպի առասաց քաղաքականութիւնը ի-հարկէ ոչ պակաս օգուտն է և հաճելի մեր տէ-րութեան համար, որը այս պատճառով ընտկա-նաբար ոչինչ արդեօք զնելու կարեւորութիւն չի ունենայ այդ առասացի և հայասէր լրագրի տա-րածման մեր մէջ... Այս մասին բոլոր յոյսը առասանայոց վրա է, որոնք իրանց հայաստանցի եղբայրների բազմին աջակցելու վերաբերմամբ Կ. Պոլսի ճառարան-պոռոնայիստների վրա թող էլ ընաւ յոյս չը դնեն...:

Մի երկու ժամ զրոյցից յետ պատրիարքի հա-մեստ տանը, գնացինք միասին Խաղիւղի Ներ-սէսեան վարժարանի պարզաբարձութեան հան-դէսը, որին ներկայ էր առ քիչը հինգ վեց հա-զար կին և տղամարդ բազմութիւն: Պարզաբար-ձութեան հանդէսը տեղից երեք ու կէս ժամի ընթացքում անցաւ: Երբ արդէն իր խաղիւղի Ներսէսեան վարժարանի ընտրի հարկա-ւոր են միայն Կ. Պոլսի ցուցամուլ մարդիկները համար, որոնց մի առանձին կարիք կայ միշտ դէպքեր ունենալ անընդմիջակ և ճանչող ճառ-բով փայլելու համար, մէջ լեռնելով աշխարհիս ամենաառաջին գիտնականից սկսած մինչև ամե-

նավերջի խելագատակը, որը կրում է միայն օտար անուն, մանաւանդ Ֆրանսիական: Պարզաբարձութեան հանդիսին կարգացվե-ցան ճառեր՝ հայերէն, թիւրքերէն, ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով: Օտար լեզուներն օր-չափ կարելի է շատ կտրատելն էլ մի առանձին անհղ Վ. Պոլսի, Զարմանալի է, որ միայն հայը պիտի անպատճառ օտարների թութակը լինի ջարդել ամեն տեսակ լեզուներ, բացի միայն իր սեփականը. հետաքրքիր է իմանալ՝ ինչո՞ւ Կ. Պոլսի յոյները ևս չունեն հայերի կապիկութիւ-նը օտար լեզուներ բլբլաղնելու մէջ, այլ նոքա խօսել, իսկ հայը միայն պիտի գտնվի ստորակ-ամենի հետ նորա լեզուով բարբառել, թէկուզ այդ լեզուն լինի վրացերէն, քիւրդերէն, ջուհու-տերէն և գնչուերէն. երբ պիտի ճանաչենք ար-դեօք մեր ազգային պատիւը և մեր անձնական արժանաւորութիւնը...:

Չը նայելով պարզաբարձութեան հանդէսի գործած խորթ տպաւորութեան մի առասանայի վրա, երեսայոց պատրաստութիւնը անտեսա-նութիւնների և աղքատիկ երեքի կողմից շատ լաւ էր. ի հարկէ այստեղ չեմ խօսում վարժա-րանի պրօգրամի վրա, որը Կ. Պոլսի մէջ ամե-նուրեք շատ թերի է, վերաբաւան և օղա-յին...:

Հանդէսը վերջանալուց յետ պատրիարքը ստե-նաբանութիւն արեց, որը վերջացրեց այստեղի լրագրական բորբոքված հարցով, այն է, ինչ է հարկաւոր նախ հայ ժողովրդին՝ հնց թէ ճառ. և չլոյս: Պատրիարքը վերջացրեց իր խօսքերը երեք շնչածած կրկնութեամբ. «հաց, հաց, դար-ձեալ հաց»:

Հայոց հարցի մասին կը հաղորդեմ ձեզ այն թաւր լուրը, որ տասնութինգ օրից կը սկսվեն և պաշտօնական բանակցութիւնները Թիւր-քիայի հետ չորս տերութեան ամենաանհրաժեշտ և ազգու միջամտութեամբ՝ Անգլիայի, Ռուսիայի և Իտալիայի և Աւստրիայի: Ի հարկէ Ֆրանսիան, որչափ էլ առ այժմ շատ դժբախտ լինի զանա-զան Բալ-Ամէնների շարժումներով Ալժիրայում և Տրիպոլիսում, դարձեալ հայոց գործին բոլոր արտով նա կը մասնակցի, իսկ արաբից յետ կը մնայ Գերմանիան, որը այնչափ յայտնի է իր խոհուն քաղաքագիտութեամբ, որ երբեք բացա-ռութիւն չի կազմի այնտեղ, ուր ինքը միայնակ է մնացած... Ուրեմն յոյս և գործ մեր կողմից, որչափ կարող ենք, օրինակ այս ինչ այն ինչ եւրոպական օրգան ձեռք առնել և ալին:

Երէկ «Standart» լրագրից արտատպվեց Մա-սիսի մէջ Գրիգոր Արծրունու գործունէութեան մասին հայկական խնդրի ասպարիզում: Մասի-սի այդ համարները այնպէս յափշտակվեցան, որ մի քանի խմբագիրներ դեռ չը կարողացան գտնել իրանց ստանալի թիւը կարողաւու համար: Այդ յօդուածը կարողաւուց յետ հասկացայ թէ «Ստանդարտ»-ի յայտնի առաջնորդը յօդուածը հայերի մասին գրված է «Standart» լրագրի ազ-դեցութեան տակ, որովհետեւ եթէ հէնց մի փոքր ուշադրութիւն դարձնէք, կը տեսնէք, որ «Սո-րադոք» կրկնել է ձեռնութեամբ մի և նոյնը, անհղ մի և նոյն միջանքը ևս, օրինակ ասե-լով թէ Վենետիկը ևս հայոց շարժման և ազի-տացիաների կենտրոնն է և այլն: Այսպէս թէ այնպէս մենք ապրում ենք այժմ մի այնպիսի վճռողական և հանդիսաւոր բողոքում, որ ցան-կալի է որչափ շատ, այնչափ աւելի խօսվի եւ-րոպական լրագիրների մէջ մեր մասին. այս է և պատրիարքի մշտական կարծիքը, որը միշտ ասում է, «մենք անպատասխան սկսեցինք մեր գործը, հարկաւոր է գտնէ հիմայ օրի մէջ չը թողնել նրան, այլ ամեն տեսակ հնարքներով նրան մար մնացնել և իրականութիւն տալ»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Մասիս» մէջ կարդում ենք հետեւեալը: Վիեննայի «Ժուրնալ դ'Օրիան» ֆրանսերէն շա-բաթաթերթը կը շարունակէ համակրալից յո-գուածներ և հատուածներ հրատարակել հայոց նկատմամբ: Մեր ազգը քաղաքակրթեալ աշխար-հի ծանօթացնելու համար այսպիսի թերթեր յոյժ օգտակար կընան լինել. իր վերջին թիւը մէջ (7 օգոստոսի), զոր երէկվայ թղթատարով ստա-ցանք, «Ժուրնալ դ'Օրիան» կը յայտարարէ թէ նշանաւոր հայազգիներու կողմէ հաւանութեան

և համակրութեան արտայայտութիւններ կը հա-նեն իրեն: Կը կարծենք թէ «աննշան», բայց ֆը-րանսերէն հասկող ուրիշ հայազգիներ ալ կընան քաջալերել նոյն թերթը, բաժանորդ գրվելով, որ շատ ծանր դոնողութիւն մը չէ, քանի որ եւ-ռամեսայն 5 ֆրանկ է միայն և տարեկանը 20 ֆրանկ: Կը կրկնենք թէ պէտք չէ խոյս տալ այսպիսի փոքրիկ զոնողութիւններէ, եթէ կը փափաքեմք որ Եւրոպա ճիշտ տեղեկութիւններ ունենայ մեր ազգին վրա:

—«Nordd. Allg. Zt.» լրագիրը հաղորդում է որ օգոստոսի 3 (15) տեղի ունեցան Շաէտտիում մեծ անկարգութիւններ: Աւելի քան 800 հողուց բաղկացած ամբոյր ման էր գալիս փողոցներում, սպառնալով հրէաների տները կտրելու: Պոլի-ցիան չը թոյլ տուեց անկարգութիւնների կատա-րելուն: Մօտ 40 մարդ կաշանաւորված են:

—Հոռոմում տեղի ունեցան հակապապական ժողովներ: Մինչև 153 հանրապետական ընկե-րութիւններ ուղարկեցին այդ ժողովներին ան-դամներին համակրական ուղերձներ:

—Մարտիկց հեռագրում են որ օգոստոսի 3-ին գումէշները արշաւանդների հանդիսի ժամանակ ժողովրդի համար շինված բարձր տախտակամածը փլշելով, 15 հոգի հանդիսականներից սպանվե-ցան և 150 հողուց աւելի վիրաւորվեցան:

—Պարագայի ազգային նորաշէն թատրոնը այր-վեցաւ:

—«Հայրենիք» լրագրում կարդում ենք հետե-ւեալ լուրը: «Այս օրերս քանի մը ֆրանսիացի եզուխներ Սամսոն եկան, Ասիա երթալ հա-տապելու համար: Կըսվի թէ ասոնց ետեւն մեծ խումբ մ'ալ պիտի գայ պապական եկեղեցին ծա-ւալելու համար Ասիոյ ներքերը: Այսպիսի մեծ հոտանքի մը դիմագրկելու համար հայը ինչ կը խորհնէ և ինչ միջոցներու ձեռնարկած են ար-դեօք»: Ահա, ուրեմն, Ազարեան սրբազանի յաղ-թութեան հետեւանդները: Ֆրանսիայից աքսոր-ված եզուխները գնում են այժմ խեղճ հայ ժո-ղովրդի արեւը ծծելու:

—Նոյն «Հայրենիք» լրագրում կարդում ենք «Stamboul» լրագրից քաղած հետեւեալ լուրերը: «Տեղական իշխանութիւնը Սամսոնի և Ամասիայի մէջ ծամբայ մը, կառուղի, շինելու հրաման ըն-դունեցան: Յունական նոր ընկերութիւն մը, որ բաւական դրամագլխի տէր է, մտադրել է եղբր Պիլիքոնի, Կ. Պոլսից և Ասիոյ ծովագնաց մէջ նաւարկութեան նոր գիծ մը բանալու: Բազմա-թիւ յոյներ սոյն ձեռնարկութեան բաժանորդ գրվել են»:

—Կ. Պոլսի թիւք «Հազդաթ» լրագիրը մի խիտ ծանր յօդուած է գրել հայերի, Հայաստա-նի և հայոց խնդրի դէմ: Լրագիրը սպառնում է հայերին, որ նրանք կը ջնջվին քիւրդերի ձեռ-քով:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻՋ, 11 օգոստոսի: Ընտրութիւնները վերջացան: Ընտրված են 85 միապետական-ներ և բժնապարտեաններ, 398 հանրապե-տականներ, որոնք 45 նոր տեղեր ձեռք բե-րին: Գամբետտայի ընտրութեան մասին վի-ճում են, իբր թէ Բելվիլի երկրորդ շրջա-նի մէջ ձոյների օրինաւոր մեծամասնու-թիւն չէ ստացել:

ՆԻՒԻՐՈՐԿ, 11 օգոստոսի: Իրանական կուսակցութեան դիմադրողային խորհուրդը մի ազգաբարութեամբ նախագուշաց-նում է անգլիական դրօշակ կրող նաւերի սկսեալ օգոստոսի 20-ից, որովհետեւ իր-լանդացիները մի գիշերվայ մէջ կոշտաց-նեն այդպիսի բոյոր նաւերը, որոնք կը գտնվեն Նիւ-Խորկի, Հալիֆաքսի, Սիդնէյի, Կիլբեկի, Մելբուրնի, Կենտուկիի և Սան-Ֆրանցիսկոյի մէջ:

ԲԵՐՆ, 11 օգոստոսի: Միացեալ խորհուրդը արգելեց գաղթական Պէտտը Կրապտիկինն ապրել Շվեյցարիայի մէջ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 11 օգոստոսի: Գարֆիլդի առողջութիւնը մի փոքր լաւացել է:

ՓԱՐԻՋ, 11 օգոստոսի: Ընտրութիւնների հետեւանքները ստուգելուց յետոյ յայտնվե-ցաւ, որ ընտրվել են 38 միապետականներ, 42 բժնապարտեաններ և 403 հանրապե-տականներ, որոնք 58 նոր տեղեր են ձեռք բերել: 64 կրկնաբուժարկութիւններ են լի-նելու:

ՐԻԳԱ, 12 օգոստոսի: Գիշերը այրվեցաւ Բերմանի փայտ սղոցելու գործարանը և մօտ հարիւր բնակեցրած տներ: Վնասը մի-լիոնից աւելի է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

56—150

Типографія Главнаго Управенія Намѣстника Кавказскаго.